նախաձեռնութեամբ արքունի թատրոնում հանդիսաւոր ներկայացումն տեղի ունեցաւ Թիֆլիսի բոլոր միջնակարգ դպրոցների աշակերտների համար, որին ներկայ էր նաև իշխան Կառավարչապետը. ներկայացումից առաջ բեմի վերայ, Գոգոլի կիսարձանի շուրջը, ժողովուելով իւրաքանչիւր դպրոցի կողմից ներկայացուցիչներ՝ պսակներ դրին կիսարձանի վերայ և մի քանի ուսուցիչներ ու աշակերտներ բանախօսութիւններ և Գոգոլի հեղինակութիւնից հատուածներ կարդացին։ Իւրաքանչիւր դպրոցական հաստատութիւն ևս առանձին կերպով տօնեց լիսնամեակը՝ դրական երեկոյթներով կամ ցերեկոյթներով։ Կառավարչական հայոց ծխական դպրոցների աշակերտներն ևս բոլորը միասին ներկայ գտնուեցան Կուկիոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցում տեղի ունեցած հոգեհանգստին։ Կովկասի միւս քաղաքներն ևս անխտիր տօնեցին դրական մեծ մարդու լիշատակը։

Շատ մխիթարական երևոյթ է, որ Ռուսաստանում ևս այժմ այդքան մեծ պատուով են տօնում մտքի մշակների լիշատակը և հայրենիքի անկեղծ բարեկամներին ու ժողովրդի ցաւերն արտայայտող տաղանդաւոր գրողներին լարգանք մատուցանելը պատուաստում մատաղ սերնդի անարատ սրտերի մէջ։

ՇԱՄԱԽԻՆ ԿՈՐԾԱՆՈՒԱԾ

Տարուս Յունուարի 31ին ցերեկուայ $1^1/_2$ ժամին սաստիկ երկրաշարժը կործանեց գրեթէ ամբողջ Շամախի քաղաքը և միաժամանակ երկրաշարժ եղաւ նաև Կովկասի քաղաքների մեծ մասում։

Շամախին պատմական հին քաղաքներից մէկն է և Շիրուանի գլխաւոր քաղաքը, որ իւր տեղադրութեան շնորհիւ հին ժամանակներից սկսած ենթարկուել է լաճախակի երկրաշարժների. անցեալ դարում այդ քաղաքը երկրաշարժներից վնասուել է 1806, 1828, 1847, 1848, 1859, 1869 և 1872 թուերին, բայց ամեն անգամ քաղաքը նորոգուել է և բնակչութիւնը վերահաստատուել իր տեղերում։

Բայց այս տարուայ երկրաշարժը տարբերւում է անցեալ դարու բոլոր շարժերից իւր բերած ծանր հետևանքներով, ո-

բին նպաստել են և մի քանի հանդամանքներ։ Ինքն ըստ ինքեան երկրաշարժը այնպիսի ուժգնութեամբ է տեղի ունեցել, որ աւերել է գրեթէ ամբողջ քաղաքը, բայց որովհետև օրը հինգշաբթի լինելով՝ մահմեդական կանանց բաղանիք գնալու օրն էր, ուստի երկրաշարժը բացի չէնքերը կործանելուց, տարել է և մարդկային բազմաթիւ զոհեր. մինչև փետրուարի կէսը Թուրքերից արդէն մօտ 2000 դիակներ էին գտնուել, իսկ հայերից 27 և ինչպէս մեզ հաղորդեց Շամախու Թեմի Հոգևոր Առենի Տ. Նախագահը, անշուշտ կրկնապատիկը պիտի լինի զոհերի թիւը, որովհետև պեղումները տակաւին աւարտուած չեն։

Տների և բոլոր հաստատութիւնների մեծ մասը քանդուած են, քաղաքն ամբողջապէս աւերուած, շրջակայ քանի մի դիւղերի հետ և բոլոր բնակիչները անխտիր մերկ և անպաշտպան հրապարակի վերայ մնացած։

Ինչպէս պէտք էր սպասել, Շամախու այդ ծանր աղէտը իւր վերայ դարձրեց Կովկասի քաղաքական վարչութեան և բոլոր ազգաբնակութեան ուշադրութիւնը. առաջին օրինակը տուաւ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը, նուիրելով արկածեալների օգտին 150,000 ռուբլի, Կովկասի Տ. Կառավարչապետի թոյլտուութեամբ ամենուրեք սկսաւ հանդանակութիւն և ժողովուրդը առանց աղդերի խտրութեան իւր մարդասիրութեան ձեռը մեկնեց դէպի կարօտեալները. Բագու քաղաքում կազմուած է մի մեծ կոմիտէ, որի կողմից ներկայացուցիչներ են ուղարկուած Շամախի և շրջակայ դիւղերը՝ դրամ, հաց, շոր և այլ կենսական պիտոյք բաժանելու։

Աղդիս Վեհ. Հայրապետն ևս իւր կողմից յանձնեց լիշեալ կոմիտէի անդամ և Բագուի գործակալ Տ. Արսէն վարդապետին 2000 ռուբլի արկածեալ աշխարհականներին և 1,000 ռուբլի հոգևորականներին բաժանելու համար։

ՆԵՐՍԷՍ ԹԱՅԻՐԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Անցեալները Թիֆլիսում վախճանուեց Երևանցի Ն. Թալիրեանցը, որ իւր կարողութեան մեծագոյն մասը, մօտ հարիւր լիսուն հազար ռուբլի, կտակել է Երևանի հայոց թեմական դպրոցին։ Այդպիսով Երևանի դպրանոցը, որ ինչպէս